

ՊԱՏՃԷՆ



ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ

Ա.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ . . . .

Գերաւշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոսի, Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի, հարազատի Մայր Աթոռոյս, հայրապետական օրհնութեամբ յայտ առնեմք.

Այսու կոնդակաւ Մերով պատուիրեմք Գերաշնորհութեան Ձերում՝ ըստ պահանջման Տ. Փոխարքային Կովկասու թողուլ առ այժմ առանց կիրառութեան զ«Ժամանակաւոր կանոնս Հայոց տարրական եկեղեցական դպրոցաց», մինչ ցնոր տնօրէնութիւն Մեր ըստ այսմ խնդրոյ։

Ի վերայ իսկականին ստորագրեալ է՝
ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Թ. 498
Ի 23 *Մարտի* 1907 *ամի*
Ի Ս. Էջմիածին
Ըստ այսմ՝ 499—503.

Բ.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ . . . .

Վասն տալոյ փոխանորդաց և գործակալաց որոշակի հրահանգս պարտուց և իրաւանց իւրեանց յարմարագոյն դատիմք այսու հայրապետական կոնդակաւ Մերով կարգադրել, զի ամենայն փոխանորդք որք ընդ Ձերով իրաւասութեամբ են, արասցեն ժողովս ի շրջանի իւրեանց՝ մասնակցութեամբ գործակալաց իւրեանց և կազմեսցեն կանոնս յօդուած առ յօդուած վասն պարտուց և իրաւանց փոխանորդաց և գործակալաց, յիշատակելով եթէ որպիսի վարչական միջոցս յարմար դատին վասն ածելոյ յուղղութիւն իշխանութեամբ իւրեանց զքահանայս և զստորադրեալս առանց դիմելոյ թեմական իշխանութեան յայլ և այլ թեթեւակի դէպս, ևս վասն հսկողութեան, բարեզարդութեան և վարչական այլ և այլ գործողութեանց թէ քահանայից և թէ եկեղեցեաց։ Եւ ապա, յետ ստանալոյ զկարծիս ամենայն փոխանորդաց և գործակալաց թեմին, ընդ Ձերով եզրակացութեամբ և դիտողութեամբ առաջի առնել զայն Մեզ ց 1 յուլիս ամսոյ այսր ամի։

Ի 23 *Մարտի* 1907 *ամի*
Ի Ս. Էջմիածին
Թ. 504—509։

Գ.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ . . . .

Ի լրումն Կոնդակի Մերոյ Թ. 40 ի 11 յունուարի 1907 ամի, որ վասն գործադրութեան «Ծխական Կանոնադրութեան», ունիմք պատուիրել զհետևեալն.

Ի բազմաթիւ խնդրանաց ժողովրդականաց երևի, եթէ ընծայացուք ոչ կարեն տալ զսահմանեալ քննութիւն յերկրորդ դասարանի յայնպիսի առարկայից, որք սկսանին միմիայն և ոչ աւարտին յայնմիկ, ուստի և անմարթանան առաջի առնել հոգևոր իշխանութեան զպահանջեալ վկայականն, որով և ոչ լինի հնարին կատարումն ա. և բ. հրահանգաց 59 յօդուածոյ այնր կանոնադրութեան յաղագս այնոցիկ գիւղորէից, թիւ [տանց] որոց է՝ պակաս քան զ 100, ընծայացուք նոցին պարտին առաջի առնել վկայական Բ. դասարանի, սակս որոյ այսու Հայրապետական Կոնդակաւ Մերով հրամայեմք քննել յԲ. դասատան միմիայն ի հետևեալ առարկայից.—Հայոց լեզու՝ ըստ ծրագրի Բ. դասարանի, Հմտութիւն Ս. Գրոց, Խորհուրդք եկեղեցւոյ, Կարգ աստուածպաշտութեան, Գործածութիւն տօնացուցի, Երգեցողութիւն շարականաց, Հայոց պատմութիւն լրիւ, Եկեղեցական պատմութիւն լրիւ, Թուաբանութիւն՝ չորս գործողութիւն ամբողջ թուովք և վայելչագրութիւն, և զկնի բաւարար քննութեան տալ վըկայական՝ յիշատակելով զչափ ուսման իւրաքանչիւր առարկայի.

Այլ և յուշ առնեմք պատուիրել վարչութեան թեմական դպրոցի ի կատար ածել զայս հրաման ամենայն օրինապահութեամբ, այն է՝ ընդունել զխնդիրս ընծայացուաց, քննել և տալ զվկայականս խնդրատուաց.

Ի 23 Մարտի 1907 ամի
Ի Ս. Էջմիածին
Թ. 515—519.